ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«07» սեպտեմբեր 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

_____ Մ. Անանյան

ԳԲԽ-90/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Կենտրոն) կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Բարվա» ՍՊԸ-ի 23.08.2016թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1.«Բարվա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Բարվա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 23.08.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

I. Բողոքի նախապատմությունը և փաստերը.

ՀՀ Շիրակի մարզի Հովունիի գյուղապետարանն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) իր կարիքների համար 22.08.2016 թվականին հայտարարել է հրավեր (այսուհետ նաև՝

Հրավեր) (ծածկագիրը՝ «ՇՄՀՀ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/1») «Հակակարկտային կայանի» ձեռքբերման նպատակով (առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ): Հայտերի բացման օր է սահմանվել 24.08.2016 թվականը:

Հրավերը հրապարակվել է օրենքի կոպիտ խախտմամբ: Նման կերպով սահմանված տեխնիկական բնութագրի պայմաններում բացակայում է «կամ համարժեք» նշումը, մասնավորապես՝ տեխնիկական բնութագրի 1.8-րդ, 1.10-րդ, 1.13-րդ, 2.2-րդ, 2.6-րդ, 5.1-րդ կետերը: Բացի այդ, «Գնումների մասին» ՀՀ օրենքին հակասող են նաև 1.11-րդ, 1.12-րդ, 1.14-րդ, 2.1-րդ, 2.3-րդ, 2.4-րդ, 2.6-րդ, 3.3-րդ, 4.3 – 4.8-րդ, 4.11-րդ, 5.2-րդ և 7-րդ կետերը: Կից ներկայացված է բնութագիրը՝ արձանագրված խախտումների նշմամբ:

Գնման առարկայի տեխնիկական բնութագրում նշված են խտրական, ոչ մրցակցային պայմաններ, մասնավորապես, «Լոկատոր» ՓԲԸ-ի կայանի տեխնիկական պայմաններին, ըստ էության, կետ առ կետ համապատասխանող պայմաններ, ընդհուպ մինչև սահմանվել են տառացիորեն նույն պայմանները, ինչ բերված է նշված արտադրողի «Լոկատոր ՀԱԳ-120» հակակարկտային կայանի տեխնիկական պայմանների «Հավելված Բ համակարգի եզրաչափերը» մասում, օրինակ գնման առարկա հակակարկտային կայանի տարբեր հանգույցների միմյանցից եղած հեռավորությունների մասով, այսինքն խախտվել է ցանկացած այլ կառուցվածքի, միևնույն ժամանակ համարժեք հակակարկտային կայան արտադրող ընկերության մասնակցության պայմանները:

Գնում կատարելու ընթացակարգը ընտրվել է օրենքի խախտմամբ, առանց համապատասխան իրավական հիմքերի:

II. Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները

Բողոք բերող ընկերությունը գտնում է, որ բողոքը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն.

«2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ, կետի համաձայն.

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն **հնարավոր մասնակիցների** համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում **մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը**»:

Ըստ Ընկերության՝ նշված նորմերից հետևում է, որ գնում կատարելու նպատակով մրցույթ հայտարարելու դեպքում այն պետք է իրականացվի Պատվիրատուի կողմից այնպես, որ պահպանվեն մրցակցային ոչ խտրական հիմունքներով մրցույթի անցկացման պայմանները:

Ընկերությունը հայտնել է, որ Պատվիրատուն հրապարակել է հրավեր, որում առկա է եղել մի տեխնիկական բնութագիր, որն, ըստ էության, ամբողջությամբ չի համապատասխանում նշված սկզբունքներին և, առհասարակ, «Գնումների մասին» ՀՀ օրենքին՝ վերը նշված հիմնավորմամբ: Այն համապատասխանում է, ըստ Ընեկրության դիտարկման, կոնկրետ արտադրողի տեխնիկական պայմաններին, և միանգամայն անհասկանալի է, թե Պատվիրատուի մոտ որտեղից է այն հայտնվել, և ինչու է, վերջինս, ի սկզբանե լինելով ենթադրյալ օբյեկտիվ գնման մրցույթ անցկացնող, հրապարակել նման տեխնիկական բնութագրով հրավեր:

Ընկերությունը նշել է, որ ՀՀ Շիրակի մարզի Վահրամաբերդ գյուղի գյուղապետարանի կարիքների համար 22.07.2016 թվականին հայտարարվել էր հրավեր և հայտարարություն (ծածկագիր՝ «ՇՄՎՀ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/1») «Հակա-կարկտային կայանի» ձեռքբերման նպատակով:

Նշված մրցույթը չեղյալ է հայտարարվել Պատվիրատուի կողմից «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի միջամտությամբ, քանի որ եղել է օրենքին անհամապատասխան:

Մեջբերված համադրման նպատակը կայանում է նրանում, որ, ըստ էության, քննարկման առարկա է եղել նույն տեխնիկական բնութագիրը: Ընդամենը կատարվել է նշված տեխնիկական բնութագրում ձևական փոփոխություն, այն է՝ 100հա-ն փոխվել է 100-120հա, որը, կարող ենք ասել, չի կարող համարվել իրավաչափ:

Բողոքին կից ներկայացվել է տեխնիկական բնութագրի օրինակը Ընկերության կողմից կատարված նշումներով, որոնք ըստ Ընկերության, չեն համապատասխանում օրենքին:

Բացի այդ, նշվել է, որ հրավերում պետք է սահմանվեր նաև կայանների տեղակայման վերաբերյալ հստակ չափորոշիչներ և պայմաններ: Դա պայմանավորված է գնման առարկայի առանձնահատկություններով, այն է՝ հակակարկտային կայանը իր տեղադրմամբ պահանջում է որոշակի աշխատանքային պրոցես, ըստ որի՝ կայանի աշխատանքի արդյունավետությունը հասցվում է առավելագույնի, այսինքն՝ անհիմն պահանջների փոխարեն պետք է Պատվիրատուն հրավերում նշեր այն էական պայմանները, որով գնման գործընթացը կլիներ արդյունավետ հաշվի առնելով հանրային շահը:

Ընդ որում, Ընկերությունը նշել է նաև, որ ընթացակարգը ընտրվել է այնպիսին, որ հնարավորինս մրցակցությունը բացառվի և հսկողություն չլինի լիազոր մարմնի կողմից:

Ամբողջ վերոգրյալը, ըստ Ընկերության, թույլ է տալիս եզրակացնել, որ «ՇՄՀՀ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/1» (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. օգոստոսի 22-ի թիվ 1 որոշումը պետք է դադարեցնել (չեղյալ համարել), քանի որ այն կազմվել է օրենքի պահանջների կոպիտ խախտման արդյունքում, իսկ պայմանագիր կնքված լինելու դեպքում ընթացակարգը ճանաչել ապօրինի և լուծել պայմանագիրը:

Ընկերությունը բողոքով Խորհրդին խնդրել է՝

1. Կիրառել ժամանակավոր միջոց՝ կասեցնել «ՇՄՀՀ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հրավեր հայտարարելու մասին 22.08.2016թ. թիվ որոշման իրականացումը մինչև սույն բողոքի վերաբերյալ վերջնական որոշման կայացումը, որը ԳԲԽ-90/16 բողոքը քննող հանձնաժողովի կողմից 02.09.2016թ. որոշմամբ բավարարվել է:

2. Դադարեցնել /չեղյալ համարել/ «ՇՄՀՀ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հրավեր հայտարարելու մասին 22.08.2016թ. թիվ 1 որոշումը:

3. «ՇՄՀՀ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով մրցույթի արդյունքում պայմանագիր կնքված լինելու դեպքում ընթացակարգը ճանաչել ապօրինի և Պատվիրատուին պարտավորեցնել լուծել պայմանագիրը:

Ընկերությունը 30.08.2016թ. ներկայացրել է բողոքի լրացում, որով հայտնել է, որ Ընթացակարգը ընտրվել է Օրենքի կոպիտ խախտմամբ և առանց իրավական համապատասխան հիմքերի հետևյալ պատճառաբանությամբ.

Ընկերությունը վկայակոչել է Օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասը, որի համաձայն՝ բանակցային ընթացակարգը կարող է կազմակերպվել առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու, եթե՝

1) գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, ինչը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ.

2) ծագել է գնման անհետաձգելի պահանջ և, արտակարգ իրավիճակից ելնելով, գնման այլ ընթացակարգի կիրառումը ժամկետի առումով անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր կանխատեսել.

3) ձեռք են բերվում ապրանքների լրացուցիչ քանակություններ, որոնք նախատեսված են մատակարարի կողմից նախապես մատակարարված սարքավորումները (կառուցվածքները) փոխարինելու կամ լրացնելու համար, և սկզբնական մատակարարի փոփոխությունը կպարտադրի պատվիրատուին ձեռք բերել այլ հատկանիշներ ունեցող ապրանքներ, ինչը շահագործման ու պահպանման

առումով կառաջացնի անհամատեղելիություն կամ անհամաչափ տեխնիկական բարդություններ: Այս պայմանը կարող է կիրառվել միայն սկզբնական պայմանագրի կնքմանը հաջորդող երեք տարվա ընթացքում.

4) պատվիրատուն, որևէ անձից կատարելով աշխատանքների կամ ծառայությունների գնում, որոշում է սկզբնական պայմանագրում չներառված, սակայն չնախատեսված հանգամանքներից ելնելով սկզբնական պայմանագրի կատարման համար անհրաժեշտ դարձած աշխատանքների կամ ծառայությունների լրացուցիչ գնում կատարել նույն անձից, պայմանով, որ՝

ա. լրացուցիչ աշխատանքների կամ ծառայությունների պայմանագիրը հնարավոր չէ տեխնիկապես կամ տնտեսապես առանձնացնել սկզբնական պայմանագրից՝ առանց պատվիրատուի համար նշանակալի դժվարություն ստեղծելու, և

բ. դրա գինը չգերազանցի սկզբնական գնման պայմանագրի գնի քսան տոկոսը: Միևնույն անձից սույն կետի կիրառմամբ լրացուցիչ գնում կարող է կատարվել մեկ անգամ.

5) ապրանքները ձեռք են բերվում իր ձեռնարկատիրական գործունեությունը վերջնականորեն դադարեցնող կազմակերպությունից կամ անվճարունակության գործով լուծարողներից կամ կառավարիչներից, վարկատուների հետ պայմանավորվածության հիման վրա կամ նմանօրինակ ընթացակարգի միջոցով՝ պատվիրատուի համար առանձնակի նպաստավոր պայմաններով.

6) գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորը:

Նշված նորմից հետևում է, որ բանակցային ընթացակարգով մրցույթը կարող է կազմակերպվել առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու գնում կատարելու համար օրենքը իմպերատիվ սահմանում է վերոհիշյալ 6 պայմաններից առնվազն մեկի պարտադիր առկայությունը, ընդ որում, նշված կարգով հայտարարելու դեպքում լիազոր մարմինը առանձին ակտով պետք է պատճառաբանի, թե ինչու հենց այդ ընթացակարգով:

Տվյալ դեպքում հիշատակված ծածկագրով մրցույթի շրջանակներում, առհասարակ, չի հիմնավորվում նշված ընթացակարգեվ գնում կատարելը: Ավելին, Ընկերությունը գտնում է, որ Պատվիրատուն ի սկզբանե նպատակ ունի գնում կատարել կոնկրետ անձից և խուսափել հնարավոր վերահսկողությունից, այսինքն

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից չի ստուգվել հրավերի իրավաչափությունը:

Ընկերությունը գտնում է, որ Պատվիրատուն, ի սկզբանե ընտրելով ոլորտը կարգավորող իրավական ակտերին չհամապատասխանող ընթացակարգ, խախտել է վերը նշված կարգը և ստեղծել արհեստական խոչընդոտներ թափանցիկ, մրցակցային, հնարավոր մասնակիցների խրախուսման սկզբունքների գնումների կազմակերպման համար:

Վերոհիշյալի հիման վրա Ընկերությունը ևս մեկ անգամ պնդել է, որ բողոքը ենթակա է բավարարման և խնդրել է Խորհրդին բավարարել այն ամբողջությամբ:

2. ՀՀ Շիրակի մարզի Հովունիի գյուղապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

ՀՀ Շիրակի մարզի Հովունիի գյուղապետարանի կողմից կարծիք չի ներկայացվել «Բարվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

Պատվիրատուի կողմից Կենտրոնին տրամադրվել է ՀՀ Շիրակի մարզի Հովունի գյուղական համայնքի ավագանու 15.07.2016թ. թիվ 14 որոշումը՝ Պատվիրատուի կարիքների համար հրատապության կարգով բանակցային ընթացակարգով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու հակակարկտային կայան ձեռքբերելու մասին:

3. ԳԲԽ-90/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-90/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.ՀՀ Շիրակի մարզի Հովունիի գյուղապետարանի կողմից ՀՀ Շիրակի մարզի Հովունիի գյուղապետարանի կարիքների համար հակակարկտային կայանի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՇՄՀՀ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգ:

2. Ընթացակարգը հայտարարվել է ՀՀ Շիրակի մարզի Հովունի գյուղական համայնքի ավագանու 15.07.2016թ. թիվ 14 որոշման հիման վրա, որով սահմանվել է հետևյալը. «Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ մասի 2-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով, որ 2016 թվականի հունիս ամիսներին 3 անգամ ուժեղ կարկտահարության հետևանքով խիստ տուժել են համայնքի գյուղացիական տնտեսությունները, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը հրատապության կարգով հակակարկտային կայան ձեռք բերելու համար՝ ավագանին որոշում է ՀՀ Շիրակի մարզի Հովունի համայնքի կարիքների համար հրատապության կարգով բանակցային ընթացակարգով առանց հայտարարությոան ձեռք բերել 1 հատ հակակարկտայի կայան»:

3. Ընթացակարգի հրավերի թիվ 6 հավելվածի՝ պայմանագրի նախագծի թիվ 1 հավելված տեխնիկական բնութագրերը սահմանվել են հետևյալ ձև, որոնց՝ ստորև ընգծված կետերում, ըստ Ընկերության, բացակայում է «կամ համարժեք» նշումը.

Գնման առարկա՝ ապրանքի անվանումը	Տեխնիկական բնութագիրը
Հակակարկտային կայան	**1.<u>Կայան</u>** 1.1 Պաշտպանվող տարածքը՝ **100-120 հա** 1.2 Հարվածային ալիքների գեներացման պարբերությունը՝ **ոչ ավել քան 5 վրկ** 1.3 Հարվածային ալիքի գեներատորի պատերի պողպատե թիթեղի հաստությունը՝ **ոչ պակաս քան 4մմ** 1.4 Բռնկիչների քանակը՝ **ոչ պակաս քան 2 հատ** 1.5 Էլեկտրասնուցումը՝ **ավտոնոմ արևային մարտկոցից (լիցքավորման կարգավորիչով)** 1.6 Սնուցման աղբյուրը՝ **կուտակչային մարտկոց** 1.7 Գազի գլանանոթների քանակը և տարողությունը՝ **6 հատ 50լ/20 կգ տարողությամբ** 1.8 Գազատար խողովակները՝ **<u>մետաղական</u>** 1.9 Ներարկվող վառելիքի քանակի կարգավորում՝ **հեռակառավարմամբ և ձեռքով** 1.10 <u>Ճնշման տվիչներ՝</u> <u>Առնվազն 2 հատ, որոնք պետք է տեղում ցույց տան ճնշումների արժեքները՝ ճնշման կարգավորիչից առաջ և հետո: Ճնշման կարգավորիչից առաջ տեղադրված ճնշման տվիչը պետք է առցանց ռեժիմում հաղորդի նաև գազի գլանանոթներում ճնշման արժեքը:</u> <u>1.11 Գազի չափաբաժնի ներմղման փականը պետք է լինի ոչ ուղակի գործարկման (երկաստիճան)</u> <u>1.12 Տեղակայումը- Հարվածային ալիքի գեներատորը և կայանի մնացած մասերը պետք է տեղադրվեն իրարից առնվազն 1.5 մետր հեռավորությանը առանձին բետոնե սալիկների վրա:</u> Տեղակայման աշխատանքները պետք է իրականացվեն մատակարարի կողմից: <u>1.13 Շանթարգելը</u> <u>Շանթարգելը պետք է տեղադրվի կայանի ամենաբարձր կետից 1.5-2 մետր հեռավորության</u>

վրա, ունենա կայանի ամենաբարձր կետից 1.2 անգամ ավել բարձրություն և չունենա ոչ մի միացում կայանի հետ

1.14 Այլ պահանջներ

- Կայծի առաջացման համար անհրաժեշտ բարձր լարումը պետք է գեներացվի բոնկիչի ներսում

- Կայանի տարածքը պետք է ցանկապատվի երկաթբետոնե հարթակի ողջ պարագծով

- Պետք է իրականացվի կայանի հողանցում

2. Ղեկավարող վահանակ

2.1 Պետք է ունենա կայանի գործարկման հրահանգի երեք տարբերակ՝ ձեռքով, SMS-ով, GPRS-ով:

2.2 Պետք է ունենա աշխատանքային երկու ռեժիմ՝ **ակտիվ և պասիվ:**

Ակտիվ ռեժիմում պետք է հասանելի լինեն կայանի բոլոր հնարավորությունները:

Պասիվ ռեժիմում պետք է արգելափակվի հեռակա կառավարման հնարավորությունը (SMS, GPRS) սակայն ոչ տվյալների առցանց հաղորդումը:

Մարտկոցի լիցավորման խափանման դեպքում կայանը պետք է աշխատի

- **225 ժամ `հերթապահ ռեժիմում**
- **45 ժամ՝ աշխատանքային ռեժիմում**

2.3 Պետք է ունենա կայանի պարամետրերի ավտոմատ առցանց հաղորդման հնարավորություն՝ կայանի կարգավիճակ, գազի ճնշման արժեք, սնուցման լարման արժեք, դռների բաց կամ փակ լինել, իսկ կրակելու դեպքում ցուցադրի, թե որ տարբերակով է տրվել հրահանգը: SMS-ի դեպքում ցուցադրում է հեռախոսահամարը, իսկ GPRS-ի դեպքում՝ հրահանգ տվողի մուտքանունը կամ ID-ն:

2.4 Պետք է ունենա սեփական (ներքին) մարտկոց, որը կմիանա հիմնական սնուցման աղբյուրի խափանման դեպքում և կապահովի առնվազն 2 ժամ ինֆորմացիայի առցանց փոխանցում:

2.5 Ծրագրային ապահովման շնորհիվ պետք է հնարավոր լինի փոխել հարվածային ալիքների գեներացման պարբերությունը և ներարկվող գազի քանակը:

2.6 Պետք է ունենա աշխատանքային ռեժիմների անվտանգության ալգորիթմներ.

- Հարվածային ալիքների գեներացման պրոցեսը սկսելուց առաջ պետք է տա 5 վայրկյան տևողությամբ ձայնային ազդանշան:

- Հարվածային ալիքների գեներացման ընթացքում իրար հաջորդող 2 չկայացած պայթյունի առկայության դեպքում համակարգը 1 րոպեով պետք է դադարեցնի աշխատանքը, իսկ դրա կրկնվելու դեպքում՝ ամբողջովին դադարեցնի հրահանգի կատարումը:

- Աշխատանքի ընթացքում որևէ դռան բացման դեպքում կայանը պետք է ավտոմատ դադարեցնի հարվածային ալիքների գեներացումը և չկատարի հեռակա տրված հրահանգները:

- Կայանը չպետք է սկսի իր աշխատանքը, եթե գազի ճնշման կամ սնուցման լարման արժեքները պակաս են սահմանված նորմատիվներից:

2.7 Համակարգն առցանց ռեժիմում վերոհիշյալ կետերի վերաբերյալ պետք է տա ազդանշան (դիսպետչերին):

2.8 Ղեկավարման վահանակը պետք է տեղադրվի արտաքին ազդեցություններից պաշտպանված առանձին պահարանի մեջ, որը պետք է ունենա IP55 կարգի պաշտպանվածության աստիճան:

3. Կապի միջոցներ

3.1 Կապի տեսակը՝ GSM ցանց

3.2 SIM քարտերի քանակը՝ 2 հատ, միաժամանակ աշխատելու հնարավորությամբ

3.3 Կապի տարբերակները՝ հիմնական-GPRS

պահեստային-SMS

4. Հեռակառավարման ծրագրային համակարգ

Կառավարվող կայանների քանակը՝ **անսահմանափակ**

Տվյալների բազան՝ **կենտրոնական**

Ինտերֆեյսը ՝ **Web** կամ համարժեք

Համակարգի գործարկման ընթացքում չպետք է առաջանա լրացուցիչ (այլ) վճարովի ծրագրերի ձեռքբերման և կիրառման անհրաժեշտություն:

Պետք է ունենա այլ տեսակի (գործող) կայանների ինտեգրման հնարավորություն:

4.1 Համակարգը պետք է ունենա տարբեր լիազորություններով օգտատերերի ստեղծման և հետագայում դրանց խմբագրման հնարավորություն:

4.2 Համակարգը պետք է ունենա էլեկտրոնային գրանցամատյան, որում ֆիքսվում են օգտատերերի մուտքերը:

4.3 Դիտարկման ռեժիմում պետք է հնարավոր լինի քարտեզի վրա տեսնել կայանների տեղակայման վայրերը:

4.4 Որպես քարտեզ պետք է օգտագործվեն google maps, google satellite, openstreetmap կամ այլ նմանատիպ քարտեզներ:

4.5 Քարտեզի վրա տեղադրված կայանների նշապատկերները պետք է գունային ազդանշաններով ցուցադրեն կայանի կարգավիճակը:

4.6 Համապատասխան լիազորության դեպքում օգտատերը պետք է կարողանա քարտեզի վրա ընտրել մեկ կամ մի քանի խումբ կայաններ, նշել պարբերությունների քանակը և տալ կրակելու հրահանգ:

4.7 Համակարգը պետք է ունենա աղյուսակային դիտարկման գործիք, որում կցուցադրվեն տվյալ օգտատիրոջը հասանելի բոլոր կայաններն իրենց մանրամասն տվյալներով, մասնավորապես՝ մարտկոցի լարում, գազի ճնշում, տվյալների վերջին թարմացում և այլն:

4.8 Աղյուսակային դիտարկման ռեժիմից նույնպես պետք է հնարավոր լինի իրականացնել կայանների կառավարում:

4.9 Համապատասխան լիազորության առկայության դեպքում օգտատերը պետք է կարողանա ծրագրային համակարգից ինքնուրույն սահմանել վառելիքի ներարկման և դրան հաջորդող դադարի տևողությունները՝ վայրկյաններով:

4.10 Ծրագրային համակարգում պետք է առկա լինի հատուկ տիրույթ (գործիք), որում իրական ժամանակում կցուցադրվեն կայաններից ստացվող տագնապի և ծանուցման ազդանշանները՝ անկախ նրանից, թե որ դիտարկման ռեժիմում է գտնվում օգտատերը:

4.11 Պետք է հնարավոր լինի խմբավորել կայաններն ըստ հիերարխիկ պատկանելիության՝ 3 մակարդակով:

4.12 Համակարգում հավաքագրված տվյալները պետք է պահվեն 5 տարի ժամանակահատվածի համար:

5) Ազդանշանային համակարգ

5.1 Նշված պարամետրերի ազդանշանային շեմերը պետք է սահմանվեն յուրաքանչյուր կայանի համար առանձին

- արևային մարտկոցի խափանման դեպքում
- դռներից որևէ մեկի բացման դեպքում
- մարտկոցի ցածր լարման դեպքում
- գազի ցածր ճնշման դեպքում
- համակարգի կողմից հրահանգի չկատարման դեպքում
- յուրաքանչյուր սարքի համար առանձին սահմանված ժամանակահատվածում ինֆորմացիա չստանալու դեպքում

5.2 Ազդանշանային համակարգի կողմից գրանցված ազդանշանի արխիվացման համար պետք է նշվի ազդանշանի առաջացման պատճառը:

6) Հաշվետվություններ

Համակարգը պետք է ունենա հետևյալ հաշվետվությունների գեներացման և ցուցադրման հնարավորություն:

- Յուրաքանչյուր կայանի համար պետք է ցուցադրվեն տրված հրահանգների ցանկը՝ ընտրված ժամանակահատվածի համար, դրանց կատարման արդյունքները և հրահանգը տված օգտատիրոջ կամ SMS հրահանգ տվողի տվյալները:
- Պետք է ցուցադրվի յուրաքանչյուր կայանից ստացված ինֆորմացիայի (գազի ճնշում, մարտկոցի լարում և այլն) պատմությունը՝ նշված ժամանակային միջակայքի համար:

7) Անվտանգություն

- Համակարգում տվյալների փոխանակումը պետք է իրականացվի կոդավորված արձանագրությունների օգտագործմամբ:
- Պետք է սահմանափակվի համակարգ մուտք գործելու հնարավորությունը՝ ըստ IP հասցեների՝ յուրաքանչյուր օգտատիրոջ համար:

	8) Պայմանագրի ժամկետ - Սկիզբը՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից: - Ավարտը՝ Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 7-րդ օրացուցային օրը ներառյալ: **9) Երաշխիք** 1 տարի երաշխիք:

*Գնման առարկաների հատկանիշների բնութագրերում հղում որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրային, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին հղումներ պարունակելու դեպքում կիրառելի է «կամ համարժեք» բառերը՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջների:

4. Վերը նշված ընթացակարգին հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակից՝ «Լոկատոր» ՓԲԸ-ն:

5. «ՇՄՀՀ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.08.2016թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 8-րդ կետի 5-րդ ենթակետով որոշվեց Ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Լոկատոր» ՓԲԸ-ին՝ որպես բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից նախապատվություն տալու սկզբունքով, և ծանուցել «Լոկատոր» ՓԲԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիր կնքելու մասին և www.gnumner.am համացանցային կայքում հրապարակելու պայմանագրեր կնքելու մասին որոշման մասին:

6. «Բարվա» ՍՊԸ-ի կողմից 11.08.2016թ., 12.08.2016թ. և 16.08.2016թ. ներկայացվել են նույնաբովանդակ բողոքներ, որոնք մերժվել են ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 29.08.2016թ. թիվ 85/16 որոշմամբ:

4. ԳԲԽ-90/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Բարվա» ՍՊԸ-ի 23.08.2016թ. ներկայացրած բողոքը, «ՇՄՀՀ-

ԲԸԱՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով ընթացակարգի հրավերը, ՀՀ Շիրակի մարզի Հովունի գյուղական համայնքի ավագանու 15.07.2016թ. թիվ 14 որոշումը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝ գնումների և գնումների գործընթացի տնտեսող, ***արդյունավետ և օգտավետ իրականացում:***

Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 4-րդ կետերի կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից, դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ

աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ Շիրակի մարզի Հովունիի գյուղապետարանի կարիքների համար հակակարտային կայանի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՇՄՀՀ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) թիվ 6 հավելվածի անբաժանելի մաս հանդիսացող թիվ 1 հավելված տեխնիկական բնութագրով (այսուհետ նաև՝ Տեխնիկական բնութագիր), Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի, 2-րդ մասի 4-րդ կետի և 3-րդ մասի պահանջների համաձայն, ամբողջությամբ և հստակ նկարագրվել են ձեռքբերվող ապրանքի, տվյալ դեպքում հակակարկտային կայանի հատկանիշները՝ ներառելով գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, ինչպես նաև որակին վերաբերող պայմանների հստակ և մանրամասն նկարագրությունը:

Ընկերությունը բողոքով հայտնել է, որ Տեխնիկական բնութագիրը կազմվել է Օրենքի պահանջների խախտումով, քանի որ գնման առարկայի տեխնիկական հատկանիշներն (Տեխնիկական բնութագրի 1.8-րդ, 1.10-րդ, 1.13-րդ, 2.1-րդ, 2.2-րդ, 2.6-րդ, 5.1-րդ, 1.11-րդ, 1.12-րդ, 2.3-րդ, 2.4-րդ, 3.3-րդ, 4.3-4.8-րդ, 4.11-րդ, 5.2-րդ և 7-րդ կետերը) սահմանվել են այնպիսին, որ խտրական և ոչ մրցակցային պայմաններ են ստեղծում «Բարվա» ՍՊԸ-ի մասնակցության իրավունքի իրացման համար:

Մասնավորապես, Ընկերությունը շեշտել է, որ Տեխնիկական բնութագրի կոնկրետ կետեր պետք է պարունակեն «կամ համարժեք» բառերը, քանի որ սահմանված պահանջները ուղղակիորեն համապատասխանում են «Լոկատոր» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող տեխնիկական բնութագրի հատկանիշներին՝ խոչընդոտելով Ընկերության մասնակցության իրավունքի իրացմանը:

Ինչպես արդեն նշվել է, Օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ ***գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն***

առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Այսպիսով, Օրենքի վերոհիշյալ հոդվածը հստակ սահմանում է, որ հրավերի տեխնիկական բնութագրում պետք է նախատեսվեն «կամ համարժեք» բառերը՝ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին հղում կատարելու պայմաններում:

Կենտրոնը արձանագրում է, որ Տեխնիկական բնութագրի մեջ առկա չէ որևէ հղում Օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, այլ ընդամենը սահմանվում են գնման առարկայի այն ընդհանուր տեխնիկական հատկանիշները, որոնցով օժտված առարկան, ըստ Պատվիրատուի, համարվում է իրենց կարիքին համարժեք:

Կենտրոնը գտնում է, որ Հրավերի Տեխնիկական բնութագիրն հստակ ձևով արտացոլում է Պատվիրատուի այն կարիքն, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Գտնում ենք, որ Հրավերի Տեխնիկական բնութագիրը կազմված է Օրենքի պահանջներին համապատասխան, որը չի խոչընդոտում կամ չի սահմանափակում հնարավոր մասնակիցների հավասար մասնակցության իրավունքը և ամբողջությամբ ու հստակ նկարագրում է ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը:

Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է նշել նաև, որ գնումը պետք է լինի տնտեսող, արդյունավետ և օգտավետ: Տվյալ դեպքում Կենտրոնը գտնում է, որ Տեխնիկական բնութագրով սահմանված գնման առարկայի տեխնիկական նկարագիրը օբյեկտիվորեն հիմնավորված է և համարժեք առկա կարիքին, որը հանգեցնում է օգտավետ գնման:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ «Բարվա» ՍՊԸ-ն 11.08.2016թ., 12.08.2016թ. և 16.08.2016թ. Խորհրդին ներկայացրել է նույնաբովանդակ բողոքներ, որոնք Խորհուրդը ԳԲԽ-85/16 որոշմամբ մերժել է, պատճառաբանելով, որ վիճարկվող ընթացակարգերի հրավերների տեխնիկական բնութագրերը կազմված են Օրենքի

պահանջներին համապատասխան, որը չի խոչընդոտում կամ չի սահմանափակում հնարավոր մասնակիցների հավասար մասնակցության իրավունքը և ամբողջությամբ ու հստակ նկարագրում է ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը:

Ինչ վերաբերում է Ընկերության այն պնդմանը, որ Ընթացակարգը ընտրվել է օրենքի կոպիտ խախտմամբ և առանց իրավական հիմքերի, ապա գտնում ենք, որ Ընկերության նման պնդումը անհիմն է, հետևալ պատճառաբանությամբ.

Օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ բանակցային ընթացակարգը կարող է կազմակերպվել առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու, եթե ծագել է գնման անհետաձգելի պահանջ և, արտակարգ իրավիճակից ելնելով, գնման այլ ընթացակարգի կիրառումը ժամկետի առումով անհնար է, պայմանով, որ նման պահանջը հնարավոր չէր կանխատեսել:

Այսպես, Պատվիրատուի կողմից Կենտրոնին տրամադրվել է ՀՀ Շիրակի մարզի Հովունի գյուղական համայնքի ավագանու 15.07.2016թ. թիվ 14 որոշումը, որով սահմանվել է, որ հաշվի առնելով, որ 2016 թվականի հունիս ամիսներին 3 անգամ ուժեղ կարկտահարության հետևանքով խիստ տուժել են համայնքի գյուղացիական տնտեսությունները, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը հրատապության կարգով հակակարկտային կայան ձեռք բերելու համար՝ ավագանին որոշում է ՀՀ Շիրակի մարզի Հովունի համայնքի կարիքների համար հրատապության կարգով բանակցային ընթացակարգով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու ձեռք բերել 1 հատ հակակարկտայի կայան:

Հետևաբար ՀՀ Շիրակի մարզի Հովունիի գյուղապետարանի կարիքների համար հակակարկտային կայանի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՇՄՀՀ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով բանակցային ընթացակարգը կազմակերպվել է Օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հրատապության, այն է՝ անհետաձգելի պահանջի ծագման հիմքով, որը հաստատվել և հիմնավորվել է ՀՀ Շիրակի մարզի Հովունի գյուղական համայնքի ավագանու 15.07.2016թ. թիվ 14 որոշմամբ:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ «ՇՄՀՀ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային

ընթացակարգը կազմակերպվել է Օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով սահմանված կարգով, իսկ Ընթացակարգի հրավերի Տեխնիկական բնութագիրն կազմված է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, ուստի գտնում ենք, որ «Բարվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած բողոքը անհիմն է:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք «Բարվա» ՍՊԸ-ի կողմից 23.08.2016թ. ներկայացրած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-90/16 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ծատուրյան